



## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ ԷՔՍՊՈՆԱՏ

Հայաստանի Պետական պատմական թանգարանի հավաքածուները անցյալ տարում համալրվել են թանգարժեք նոր էքսպոնատներով:

Հնագիտական բաժնին հատկացված 425 նոր էքսպոնատների մեջ՝ մեծ արժեք են ներկայացնում Կիրովականում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված իրերը, որոնք վերաբերում են երկրորդ հազարամյակի սկզբին։ Դրանք են — մեկ ուկյա և շորս արծաթյա թասերը և բրոնզից պատրաստված իրեղենները։ Կենցաղային ու տնային գործածության 250 հնագույն առարկաներ էլ ստացվել են Դվինում կատարված պեղումների հետևանքով։ Ընթացիկ տարում Դվինում հնագիտական թանգարան է բացվելու։

Մեծ աշխատանք են կատարել թանգարանի վերականգնող աշխատանոցները։ Վերականգնված են 837 մետաղե, ապակե, կավե և այլ առարկաներ։ Սրանց մեջ իրենց գեղցկությամբ աշքի են ընկնում Կարմիր Բըլուկում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված քերամիկան և օրնամենտները ունեցող կարասները։

Ներկայում թանգարանն ունի մոտ հարյուր հազար էքսպոնատ։

### ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԽԱՎԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի խորհրդավոր անհայտացումից հետո, 1848 թվին, նրա ընտանիքը մնում է անօգ։

Գրողի կինը՝ է. Աբովյանը մի քանի տարի շարումակ բախում է ցարական կառավարության ներկայացնության դաշտում և իր կին սպառաւաների համար կինսաթոշակ նշանակել, հաշվի առնելով ամուսնու մատուցած ծառայությունը։ Այս մասին եղած գրագրությունները ներկայում պահպան են Վարշավական ՍՍՌ Պետական պատմական արխիվում։ Երևանի նահանգապետության կովկասի փոխարքան, փինանսների մինիստրը, Կովկասյան ուսումնական շրջանի հոգաբարձուն և ցարական կառավարության մյուս աստիճանագորները, սկսած 1852-ից մինչև 1854 թիվը, ոչ մի կերպ չկարողացան համաձայնության գտն թարգում Աբովյանի այրում պետք է կինսաթոշակ տալ թե ոչ և ի՞նչ շափով։

Խաչատուր Աբովյանը ապրել է շատ հա-

մեսաւ։ գավառական ուսումնարանի տեսչի և ուսուցչի աշխատավարձը հազիվ է բավարարել նրա ընտանիքի կարիքները հոգաւուն։ Թե ինչպիսի ծանր կարիքի մեջ էր գոնզվում նրա ընտանիքը, մեզ ասում են այն փաստաթղթերը, որոնք վերցնում են հայտնաբերվել Վարշավական ՍՍՌ Պետական արխիվում։ Այդ փաստաթղթերը վերաբերում են անցյալ դարի 60-ական թվականներին։

Աբովյանի այրին, մնալով առանց գոյության միջոցների, երեխաները ձեռքին, պետական պաշտոնատների դռներն էր մաշում Քանաքեռի քնակիչ Աղաբար Աղաքելյանից 212 արծաթ ոռուի ստանալու համար, որ վերջինս պարու էր նրա ամուսնուն։

Երևանի նահանգապետը, Կովկասյան երկրի քաղաքացիական վարչության պետը, Կովկասի փոխարքան, սենատը եռանդու գրագրություններ են վարել հօգուստ է. Աբովյանի 212 արծաթ ոռուին բռնագանձելու մասին, սակայն այդ բրուկովարտական գրագրություններից չի երևում, թե արդյոք է.

Արգավանին հաջողվել է ստանալ իրեն հասանելիք գովարը, թե ոչ Հայտնաբերված գործում կան տեղեկանքներ, դիմումներ,

հարցաքննություններ, որոնք ցույց են տալիս, որ Աղարար Առաքելյանը իրոք պարտք է եղել Արովյանին:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն տարվա սկզբից սկսած երեանի ժողովրդական ստեղծագործության տունը ըստացել է գրի առնված ժողովրդական նոր շատ երգեր, պատմվածքներ, զրուցներ ու առածներ: Բանահավաք Ա. Խանզադյանը հավաքել է Արարատյան դաշտի կոլխատիկների մոտ 60 ստեղծագործություններ: Մրանցից ուշադրության արժանի են «Քրանցքի երգը», որի հեղինակը գովերդում է Ներքին Զանգվիլ ջրանցքի կառուցանմը, և «Երգ բամբակի մասին», որը գրի է առնված Հոկտեմբերյանի բամբակագոտի գործարանի բանվորուհի Մարիամ Դյուկրյանի երգածից:

Հայտնի բանահավաք Ի. Ալավերդյանը լեռնային Ղարաբաղի ինքնավար մարդից ու-

ղարկել է շորս տեսքը, որոնց մեջ գրի են առնված ժամանակակից երգեր: Այդ երգերի մեծամասնությունը նվիրված է Ստալինին, Սովորական Բանակին, ՍՍՌՄ ժողովուրդների եղայրական բարեկամությանը և մասնավորապես հայու աղբբեջանցի ժողովուրդների բարեկամությանը:

Միկոյանի միջնակարգ դպրոցի դիրեկտոր Վ. Մկրտչյանը հավաքել է մոտ 60 երգ, պատմվածք ու առած: Մեծ հետաքրքրությունը է ներկայացնում Վ. Մկրտչյանի կողմից գրի առնված «Կոլխոզային շատ բարիք» երգը: Այս երգում խոսվում է կոլխոզիների ունեոր կյանքի և այն մասին, թե ինչ տվին կոլխոզային կարգերը գյուղացիության:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒԿՐԱԽՆԵՐԵՆ

Նշանավոր բանաստեղծ ակադեմիկոս Պավլո Տիշինան ուկրաիներեն յեղվով թարգմանել է Հովհաննես Թումանյանի մանկական բանաստեղծությունները, որոնք առանձին գործով լույս են ընծայվել Կիևում:

Հ. Թումանյանի բանաստեղծությունները առաջին անգամ ուկրաիներեն լեզվով հրատարակվել են 1940 թվին, հետևաբար այս ժողովածուն հանդիսանում է մեծ բանաստեղծի ստեղծագործությունների ուկրաիներեն երկրորդ հրատարակությունը:

Այս թարգմանությամբ ուկրաինացի մանուկները հնարավորություն են ստանում իրենց մայրենի հարազատ լեզվով կարդալու անմար: Հ. Թումանյանի սքանչելի բանաստեղծությունները, որոնք նորը ժողովուրդականությամբ ու իսկական գեմուկրատիգմով տոփորված լինելով, չնա կարող չհուզել նաև ուկրաինացի ընթերցողներին:

Դրիքի թարգմանչին հաջողվել է հարազատորեն վերարտադրել Հ. Թումանյանի բանաստեղծությունների գոմելովթյունը, նրանց հմայիչ պարզությունը. նա թարգմանված ամեն մի բանաստեղծության մեջ պահպանել է այդ բանաստեղծության շափրտրամադրությունը, միաժամանակ վարպետորեն բացահայտելով նրանց հումանիստական բովանդակությունը:

Ժողովածուի մեջ զետեղված են «Կանաչ ախտեցեր», «Քամին», «Կույր աշուղը», «Միտիկի օրորդը», «Թոշունի մասմունքը», «Մարտ», «Աղուն», «Առաջին ծյունը», «Փիսիկի գան-

գատը», «Գետակը», «Տերևաթափ» և «Գարնան հրավեր» բանաստեղծությունները: Այս բոլոր բանաստեղծություններն էլ թարգմանված են մեծ սիրով, բանաստեղծական բարձր կուլտուրայի տեր գեղագիտի հմտությամբ ու անզուրական վարպետությամբ: Առանձնապես հիշատակության արժանի է «Փիսիկի զանգատը» բանաստեղծության հիանալի թարգմանությունը:

Հ. Թումանյանի այս բանաստեղծությունների անզուրական թարգմանությունը պիտի վերագրել նրան, որ բանաստեղծ, ակադեմիկոս Պավլո Տիշինան ուսումնասիրել է թհայ լեզուն և թե երկար տարիներ զբաղվել հայ գրականությամբ: Ուկրաինայի այս ականակը ու տաղանդավոր բանաստեղծը բարեկամական կապերով կապված է եղել հայ բանաստեղծների հետ և հատկապես Հովհաննես Հովհաննիսյանի հետ: Դեռ անցյալում նա ուկրաիներենի էր թարգմանել Հովհաննես Հովհաննիսյանի մի շարք բանաստեղծությունները, Հովհաննես Թումանյանի «Անուշ»-ը, «Մի կարի մեղը»-ը, «Ենուն ու կատուն»: Վերջերս էլ նրա խորմբագրությամբ ուկրաիներեն լեզվով լույս տեսավ մեծանուն գրող Խաչատուր Արովյանի «Ավել Հայաստանի» վեպը:

Պիտի ավելացնել նաև, որ Հ. Թումանյանի բանաստեղծությունների այս ժողովածուն ձաշակով նկարագրվել է նկարիչ Պլեշչանսկին, իսկ հրատարակությունն էլ կատարված է մեծ ինաւճքով:

## ՍԱԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՉՈՒՄ

1948 թվին նշանափոր գիտական աշխատությունների, գյուտարարությունների, արտադրական աշխատանքի մեթոդների արժադարական կատարելագործումների և գրականության ու արվեստի ասպարեզում աշքի ընկնդղ ստեղծագործությունների համար ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշմամբ Ստալինյան մրցանակներ են շնորհված երկրի գիտականներին, արտադրության նորաներին, կոլյոզնիկներին, գրողներին ու արվեստագետներին:

Ստալինյան մրցանակի արժանացածների թվում են գտնվում նաև Հայ ժողովրդի զավակները:

1948 թվի աշբի ընկերող զյուտերի և արտադրական աշխատանքի մեթոդների արժադարական կատարելագործումների համար Եկարգադ աստիճանի մրցանակ է շնորհված՝ 100 հազար ռուբլու չափով՝

Խայ Սերգեյի Վարունյացին (մեկ ուրիշ ընկերող հետ միասին). — Վ. Ի. Լենինի անդամ Գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիայի իսկական անդամ, բամբակի նոր տեսակներ աճեցնելու համար:

Արտեմ Խվանի Միկոյանին (ուրիշ հինգ ընկերների հետ միասին). — աշխատանքի դեկավար, ինքնաթիռաշխնության կրնստրուկտոր, — ինքնաթիռային նոր ագրեգատ ըստեղծելու համար:

Խոսիֆ Միքայելի Տիգրանովին (ուրիշ երեք ընկերների հետ միասին). — գլխավոր ինժեներ-կոնստրուկտոր, — Մոսկվայում կառուցվող 32, 26 և 20 հարկանի շենքերի կրնստրուկցիա մշակելու համար:

Արմենակ Արտեմի Գալստյանին, — Երևանի Մուլհասի գործարանի դիրեկտոր, Հավեանես Գրիգորի Հովհաննիսյանին, — նույն գործարանի ինժեներ, Մինաս Բողբանի Սովունակին, — նույն գործարանի ինժեներ (ուրիշ ընկերող հետ միասին), — Էկեկտրաձուլման միջոցով հարակայում իրեն ստանալու մեթոդներ մշակելու և արդյունաբերության մեջ արմատավորելու համար:

Սուրեն Միքայելի Հարուրյունյանին (ուրիշ յոթը ընկերների հետ միասին). — Գիպոռուգիմաշի Դրանեցի ֆիլիալի ինժեներ, — ածխային կոմբայն ստեղծելու համար:

Արշակ Խվանի Մատուռովին (ուրիշ հինգ ընկերների հետ միասին). — աշխատանքի դեկավար, «Գրոզնեֆտ» միավորման գլխավոր երկրաբան, — նավթահանք հայտնագործելու և հետախուզելու համար:

Երերդ աստիճանի մրցանակ է շնորհված 50 հազար ռուբլու չափով՝

Արամայիս Արկադիի Հարուրյունյանցին, — աշխատանքի ղեկավար, Սուրեն Հակոբի Արգամանյանին, — Լենինգրադի Վ. Ի. Պլյանովի (Լենինի) անվան էլեկտրոտեխնիկական ինստիտուտի ինժեներ (ուրիշ երեք ընկերների հետ միասին), — Հորատման դուրերի պողպատյա ձուկածու մասեր ստեղծելու համար:

Ռուբեն Սերգեյի Համբարձումյանին (ուրիշ չինգ ընկերների հետ միասին). — Ավիացիոն նյութերի համամիութենական ինստիտուտի ինժեներ, — պենոպլաստիկ մասսաներ ըստանալու տեխնոլոգիան մշակելու և արդյունաբերության մեջ արմատավորելու համար:

Սուրեն Խրիստափորի Դադյանին (ուրիշ երկու ընկերների հետ). — աշխատանքի ղեկավար, նավթարդյունաբերության մինիստրի տեխնակալ, — Հորատման տեխնոլոգիան և նավթահորերի շահագործումը բարեխավող խողովակների կանստրուկցիան մշակելու համար:

Գևորգ Մկրտչի Կամարյանին, — աշխատանքի ղեկավար, գործարանի ինժեներ, Միքայել Սերոբի Սոլոմոնյանին, — գործարանի գլխավոր ինժեներ (ուրիշ երեք ընկերների հետ միասին), — քիմիկական արտադրանք ստանալու համար էլեկտրոլիզերի կոնստրուկցիա մշակելու և այն արդյունաբերության մեջ արմատավորելու համար:

Անդրանիկ Ղևոնի Խոսիֆյանին (ուրիշ հինգ ընկերների հետ միասին). — Հայկական ՍՍՌ Գրտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ, — Էկեկտրական մեքենաների կրնստրուկցիա մշակելու և դրանց արտադրությունը յուրացնելու համար:

1948 թվի աշբի ընկերող երածշտական բեմական և վկալ ստեղծագործությունների (օպերա, բալետ, օրատուիա, կանտատա) համար

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված՝ 100 հազար ռուբլու չափով՝

Ալեքսանդր Գրիգորի Հարուրյունյանին. — կոմպոզիտոր, — «Կանանտատա Հայրենիքի մասին» երկի համար:

Բալետային արվեստի ասպարեզում Եկարգադ աստիճանի մրցանակ է շնորհված՝ 50 հազար ռուբլու չափով՝

Սերգեյ Արտեմի Բալասանյանին (ուրիշ չորս ընկերների հետ միասին). — Տաղիկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, — Տաղիկական օպերայի և բալետի թատրոնում «Ակյալ» և Մեծուն» ներկայցման համար:

Ճարտարապետության ասպարեզում

Երկորդ աստիճանի մրցանակ է շնորհված՝  
50 հազար ռուբլով շափով  
Աշուն Աշունի Մելոյանցին (ուրիշ մեկ ըն-  
կերոց հետ միասին).— ճարտարապետ, նա-  
խագծի հեղինակ,— Մուլիլյանմ Ապատամ-  
բության հրապարակում 16 հարկանի բնա-  
կելի տան նախագիծ ստեղծելու համար:

Ստալինյան մրցանակի լաուրեատ, երի-  
տասարդ կոմպոզիտոր Ալեքսանդր Հարու-  
թյունյանի «Կանտատա Հայրենիքի մասին»  
երաժշտական ստեղծագործությունը արժա-  
նացել է Սովետական Միության Գրաժնա-  
կան հասարակայնության շերմ ընդունելու-  
թյանը: Մեծ գովեստով են արտահայտվում  
այս ստեղծագործության մասին մեր մեծ  
Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայի թերթե-  
րը, սովետական ականավոր երաժշտագետ-  
ները: Ա. Հարությունյանի այս երկը առաջին  
անգամ Մոսկվայում կատարվել է 1948 թվան  
ստեղծված սովետական լավագույն գործերի  
հետ միասին, դեռևս ՍՍՌՄ Սովետական  
կոմպոզիտորների միության պլենումի օրե-  
րին, արժանանալով բոլորի միահամուռ  
հավանությանը: ՍՍՌՄ Սովետական կոմ-  
պոզիտորների միության գլխավոր քար-  
տուղար, կոմպոզիտոր Տ. Խրեննիկովը պի-  
նումում արած իր գեկուցման մեջ հետևալն  
է ստել այդ երկի մասին.—

«Ըլքախալի» է նշել նոր, տաղանդավոր ըս-  
տեղծագործությունների երեան գալը, գրված  
երիտասարդ կոմպոզիտորների կողմից: Դա  
Հարությունյանի «Կանտատա Հայրենիքի  
մասին» երկն է, իր բովանդակությամբ խորը  
հայրենասիրական մի ստեղծագործություն,  
որը տոգորված է երիտասարդական կեն-  
տաթիրու ուժով և ճշմարտացի կերպով է  
արտահայտում մեր իրականության կերպար-  
ները: Հեղինակը ստեղծել է ձևով կուռ, ար-  
տահայտիլ մի երկ, որը հանդիսանում է ոչ  
միայն հայ երաժշտական կուտուրայի հա-  
շողությունը, այլև մեր ընդհանուր հաշողու-  
թյունը»:

Կոմպոզիտոր Ի. Զերժինսկին՝ «Բազմախոս-  
տումնալից տաղանդը խորագիրը կրող հոգ-  
վածում գորում է. — Ալ. Հարությունյանի վեր-  
շին ստեղծագործություններից մեկն է «Կան-  
տատա Հայրենիքի մասին» երկը՝ գրված հայ-  
րանաստեղծներ Սարմենի և Աշուն Գրաշու-  
խոսքերի հիման վրա: Սա հինգմասյան վո-  
կալ-սիմֆոնիկ մի ստեղծագործություն է՝  
գրված երկու մեներգիչների, երգեցիկ խմբի  
և սիմֆոնիկ նվագախմբի համար խորը հայ-  
րենասիրական բովանդակություն, վառ, ար-  
տահայտիլ մեղեղիներ, նման արևավառ Հա-  
յաստանի ժողովրդական երգերին, գոմեղ

գործիքավորում, աղբյուրի պէս բխող երի-  
տասարդական խառնվածքի հետ միասին ձևի  
կլասիկ հավասարակշռվածություն—ահա սը-  
րանք են առանձնահատուկ գծերը այդ երկի,  
որն արժանացել է Սովետական կոմպոզի-  
տորների միության վերջերս ավարտված պը-  
հնումը՝ մասնակիցների միահամուռ հավա-  
նությանը:

Կոմպոզիտոր Ա. Նովիկովը հետևակ շերմ  
խոսքերով է դրվատում այդ երկը. «Դա իիքի  
շունչն ենք զգում մենք, ունկնդրելով հայ ե-  
րիտասարդ կոմպոզիտոր Ա. Հարությունյա-  
նի վեհ հանդիսավորությամբ, պատանեկա-  
կան եռանդով ու կենսուրախությամբ օժտած  
«Կանտատա Հայրենիքի մասին» երկը, որի  
մեջ նա երգում է մեծ ովերությամբ կոմու-  
նիզմ կառուցող սովետական մարդկանց ա-  
զատ աշխատանքը: Սովետական երաժշտու-  
թյունը, թերևս, առաջին անգամն է ստանում  
պայծառ, հետեղղականորեն ունախտական,  
խորը ժողովրդական խոշոր ֆորմայի մի երկ՝  
նվիրված ստեղծագործական սոցիալիստա-  
կան աշխատանքի թեմային, երկ օժտած է-  
մոցիոնալ հագեցվածությամբ, միլոդիակա-  
նությամբ և պայծառ ու պարզ ըստ իր երաժշ-  
տական լեզվի: «Կանտատա Հայրենիքի մա-  
սին»-ը հագեցված է ժողովրդական ինտո-  
նացիաներով, նրա լեզուն օրգանապես կապ-  
ված է հեղինակին հարազատ տարրերի—  
Հայ ժողովրդական մելոսի հետ: Եվ այս  
հանգամանքը ոչ միայն չի խանգարում, այլ  
նույնիսկ նպաստում է կանտատայի լայն  
ժողովրդականացմանը Սովետական Միու-  
թյան բոլոր ժողովրդականությունների մեջ»:

ՍՍՌՄ Սովետական կոմպոզիտորների  
միության վարչության քարտուղար Վ. Կու-  
խարսկին գրում է:

«Հայրենասիրական վեհ թեմային է նվիր-  
ված երիտասարդ հայ կոմպոզիտոր Ա. Հա-  
րությունյանի «Կանտատա Հայրենիքի մա-  
սին» երկը: Այս խորը էմոցիոնալ ստեղծա-  
գործության հինգ մասերում վեր և խոյանում  
գեղեցիկ կերպարը հայ քրանչազան, ստեղ-  
ծագործ ժողովրդի, որն իր երիտասարդու-  
թյունը և երգանկությունը գտավ սովետա-  
կան ժամանակաշրջանում»:

Ոելեֆ, պայծառ մելոդիկ լեզվուն, որի ար-  
մատները գալիս են հայ ժողովրդական եր-  
գից, ներգործող, ծատիվ երաժշտական կեր-  
պար ստեղծելու կարողությունը, ձևի լավա-  
գույն տիրապետումը, երանգավոր նվազա-  
խումբը—այս ամենը խոսում է Ա. Հարու-  
թյունյանի խոշոր ունախտական տաղանդի  
մասին»:



Տաղանդավոր կոմպոզիտոր Ա. Հարու-  
թյունյանի կանտատայի առաջին մասը՝

«Ցընծության երգը» պատկերում է սովետական ժողովրդի հաղթական տրամադրությունը, նրա ուրախությունն ու ցնծությունը Հայրենական Մեծ պատերազմում նենք թշնամու դեմ լիակատար հաղթանակ տանելուց հետո: Ճնշեցին սկզբից շեփորների տոնական կանչերից սկսած, կոմպոզիտորը ստեղծում է իր բնույթով պայծառ, առնական և թարմ գործում պայծառ կանչը ընդդրկում է իր հերոսներին: Շեփորների կանչը ընդդրկում է ամբողջ նվազագայումը ու միաձուվում տոնական խրմբերդի հետ: Ցնծագին այս ուրախությունը կոմպոզիտորը արտահայտել է հայ ժողովրդական երգային ինտոնացիաների միջոցով:

Կանտատայի երկրորդ մասը՝ «Կրեմլյան եղինիները» նվիրված է Սովետական Միության պանծալի մայրաքաղաք Մոսկվայի կրեմլի եղինիներին: Դիմելով եղինիներին կոմպոզիտորը գովերգում է նրանց ու նախանձում, որ նրանք հավետ կանգնած են Բանկագին Կրեմլի պատերի տակ: Մենք ենք նրան համապատասխանող ամբողջ երաժշտությունը արտահայտում է ժողովրդի չերմ ու անսահման սերը իմաստուն առաջնորդներ լինինի և Ստալինի նկատմամբ: Այս երգը արտահայտված է բարիտոնի ծավալուն մեղեդով, որ կատարվում է նվագախմբի և երգեցիկ խմբի քնքուց ձայնակցության տակ: Սկզբում նա հնչում է պարզ, քայլ աստիճանաբար աճնույզ վերջում մնում է միայն նըլվագախմբին՝ հասնելով իր սիմֆոնիկ զարդարմանը: Այս մասը իր ունակութական ուժանտիկայով, շերմ իրառնվածքով գերում է ունկնդրին:

Երրորդ մասը՝ «Հնգամյակի երգը» դիմացիկ ու աշխույժ է: Հեղինակը մեծ վարպետությամբ, երաժշտական գումար պատկերենուվ է արտահայտել հնգամյակի արագընթաց տեմպը: Լիահնչում է աշխատանքի խմբերգը:

Երրորդ մասի ավարտման մոմենտին սկսվում է կանտատայի չորրորդ մասը՝ «Օրորոցային երգը», որով հեղինակը դիմում է աճող սերնդին: Նվագախմբի և երգեցիկ խմբը մեղմօրոր երաժշտության ֆոնի վրա սկիզբ է առնում մոր գորովալից թովիչ երգը: Իր լիրիկական ջերմությամբ, հուզականությամբ երաժշտական այս գրավիչ պատկերը անմիջապես գերում ու հուզում է ունկնդրին: «Օրորոցային երգ»-ի մելոդիան ներշնչող է և անմիջական է իր տրամադրությամբ:

Կանտատան ավարտվում է այնպես, ինչպես որ սկսվում է, հորակապ երաժշտությամբ, հանդիսավոր ֆինալով, որը հնչում է

որպես Հայրենիքի ու ժողովրդի Հիմն: Կանտատայի հաղթական այս ֆինալը նվիրված է սովետական մեծ Հայրենիքին և սովետական հաղթող ժողովրդին:

\*\*\*

Կոմպոզիտոր Ա. Հարությունյանը ծնվել է 1920 թվին Երևանում: 1927 թվին նա քննությամբ ընդունվել է Երևանի կոնսերվատորիային կից երաժշտական դպրոցը: Ընդունման հանձնաժողովի անդամ, մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, ծանոթանալով երեխայի երաժշտական ունակությունների հետ, հայտնում է, որ նրան խոստումնալից ապագա է սպասում և պետք է հատուկ ուշադրություն դարձնել նրա երաժշտական կրթությանը:

Դեռ երաժշտական դպրոցում սովորելու ժամանակ երևան հետաքայլ է առաջարկվությունը: 1934 թվին նա ընդունվում է Երևանի Պետական կոնսերվատորիան: Ուսանողության տարիներին նա ուսումնասիրում է հայ, ուսա և համաշխարհային երաժշտական կուտակությունի կամացի նմուշները: Այդ տարիներին նա գրում է դաշնամուրային վարիաֆիաները, «Բալլարդ» 26 կոմիսարների մասին», «Հայկական պար», նախերգանքներ դաշնամուրի համար, մի շարք վոկալ երկեր և վերջապես իր դիմումային աշխատանքը՝ դաշնամուրային համերգը նվազախմբի հետ երեք մասից բաղկացած:

1941 թվին Ա. Հարությունյանը հաջողությամբ ավարտում է Երևանի կոնսերվատորիայի երկու ֆակուլտետները՝ կոմպոզիցիայի (դրցենտ Վ. Տալյանի դասարան) և դաշնամուրի (դրցենտ Օ. Բաբայանի դասարան):

Հայրենական պատերազմի տարիներին նա գրում է հայրենասիրական երկեր, մեծ ոգեգործթյամբ արտահայտելով սովետական ժողովրդի հերոսական պայքարը: Դրանցից «Մեր գործը արդար է» սիմֆոնիկ ուլտրատուրան արժանացել է ուսապուրիկական մրցանակի:

1946 թվին, մի խումբ երիտասարդ կոմպոզիտորների հետ միասին, նա մեկնում է Մոսկվա՝ կատարելագործվելու համար: Այս տեղ պրոֆեսորներ Գ. Լիտինսկու, Ա. Վերիկի և ուրիշների դիմավարությամբ Ա. Հարությունյանը զբաղվում է ուսական և արամտա-ելքությական կամացիների լավագույն երաժշտական նմուշների խորը ուսումնասիրությամբ: 1947 թվին նոյեմբերի 7-ին, Մոսկվայի կրնակավատորիայի Սեծ դահմիճում սիմֆոնիկ նվագախմբությունը, ՍՍՌՄ ժողովը

դական արտիստ Ն. Գոլովանովի ղեկավարությամբ, կատարում է Ա. Հարությունյանի «Հանդիսավոր ներքող»-ը և «Հաղթական

բայլերգ»-ը։ Իսկ 1948 թվին 28-ամյա կոմպոզիտորը ստեղծագործում է իր նշանավոր երկը՝ «Կանտատա Հայրենիքի մասին»։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԱՋԱՎՈՐՆԵՐԻՆ ՍՊԾԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության 1949 թ. ապրիլի 16-ի Հրամանագրով, տարեկանի, բամբակի և ծխախոտի բարձր բերք ստանալու համար, Հայկական ՍՍՌ գուղատնտեսության առաջավորների մի մեծ խումբ պարգևարվել է ՍՍՌ շքանշաններով և մեդալներով։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԱՋԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ՍՍՌ ՇԲԱՆԴԱՆՆԵՐՈՎ ԵՎ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության 1949 թ. ապրիլի 16-ի Հրամանագրով, ցորենի, տարեկանի, բամբակի և ծխախոտի բարձր բերք ստանալու համար, Հայկական ՍՍՌ գուղատնտեսության առաջավորների մի մեծ խումբ պարգևարվել է ՍՍՌ շքանշաններով և մեդալներով։

շավորներ արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոշմանը ու պարգևատրվել ենինի շքանշաններով և «Մուրճ ու մանգաղ» ոսկյա մեդալներով։

Լենինի շքանշանով պարգևատրվել են 16 մարդ, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով՝ 60 մարդ, «Աշխատանքային արիության համար» մեդալով՝ 97 մարդ, «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով՝ 157 մարդ։

## ԴԻՄԼՈՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻՆ

Ապրիլի 5-ին կայացավ Հայաստանի Սովետական ճարտարապետների միության անդամների ժողովը՝ նվիրված կին-ճարտարապետների աշխատանքների առաջին Համամիութենական ցուցահանդեսի (Մոսկվայում) մասնակիցներին դիմումներ և պատվոգրեր հանձննելուն։

Հայաստանի Սովետական ճարտարապետների միության վարչության նախագահ Ա. Սաֆարյանը իր ելույթում նշեց, որ մինչ Հոկտեմբերյան Մեծ ռեզուլցիան Հայաստանում ոչ մի կին-ճարտարապետ չկ եղել, իսկ ներկայումս աշխատում են 22 կին-ճարտարապետ, որոնք ստեղծագործական մեծ նվաճումներ ունեն։

Ճարտարապետ Լ. Բարյալանը իր գեկուցման մեջ հակիրճ կերպով բնութագրեց Համամիութենական ցուցահանդեսի մասնակիցների ստեղծագործական գործունեությունը։ Ցուցահանդեսի մասնակիցներից Ա. Տեր-Ավետիքյանը Հայաստանի առաջին

կին-ճարտարապետն է, Մ. Փարեմուզովան հայտնի է իր մասնակցությամբ լենինի հուշարձանի կառուցմանը երեանում, Պ. Մսերյանի աշխատանքների հիմնական բովանդակությունը կազմում է մերձքաղաքային շրջանների շինությունների նախագծումը, Վ. Աճեմյանը աշխատում է արդյունաբերական ճարտարապետության ասպարեզում, Յ. Արարյանը մասնակցել է Զորագիշի հիդրոտեխնիկական կառուցվածքների շինարարությանը, Գ. Քանքանյանը զբաղվում է շենքերի արտաքինի ճարտարապետական խրնդիրներով և այլն։

Հայաստանի ավագագույն ճարտարապետներից մեկը՝ Բ. Արազյանը ցուցահանդեսին մասնակցած 19 կին-ճարտարապետներին է հանձնում ՍՍՌ Միության Սովետական ճարտարապետների միության վարչության նախագահության կողմից տրված դիմումները և պատվոգրերը։

## ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆԵ

Մոսկվայի Հայկական կուլտուրայի տանը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գյուղատյունների Ակադեմիայի իսկական անդամ, ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ի. Եղիազարյանի գեկուցումը՝ «Սևանի պրոբլեմը» նյու-

թի մասին։ Զեկուցողը ցուց տվեց այն խոշոր նշանակությունը, որ ոնք նա ուսպուրիկայի ժողովրդական տնտեսության զարգացման, Արարատյան դաշտի հողային տարածությունների ուսումնական համար։ Ունկը-

դիրները զեկուցումը լսեցին մեծ հետաքրքրությամբ:

Մոսկվացիները մարտի 12-ին լսեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի դասախոսությունը՝ «Կուլտուրայի զարգացումը Սովետական Հայաստանում» թեմայով:

Մոսկվայի հասարակայնությունը Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, կուլտուրայի և գիտության նվաճումներին ծանոթացնելու նպատակով, այս տարի կարդացվելու է 20 դասախոսություն,

որոնք կազմակերպում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կուլտուրայի նարկների գործերի կոմիտեի կենտրոնական դասախոսական բյուրոն:

Այսպես օրինակ լսվելու են ակադեմիկոս Ա. Ալիխանյանի, դոկտոր-պրոֆեսոր Մ. Ներսիսյանի, բիոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Բատիկյանի դասախոսությունները: Դասախոսությունների են կարգադրու նաև Հայկական ՍՍՌ Պետականի նախագահ Լ. Խաչատրյանը, Գյուղատնտեսության մինիստր Ե. Ղազարյանը և ուրիշներ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մարտի 31-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տարեկան ժողովը, որին մասնակցում էին ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամները, թղթակից-անդամները, ինստիտուտների և հիմնարկների ղեկավարները և Ակադեմիայի գիտական աշխատողները:

Ժողովը, բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը:

Ակադեմիայի 1948 թվի գործունեության արդյունքների և գիտա-հետազոտական աշխատանքների 1949 թվի պահանջ մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան անցած տարում, —ասաց զեկուցումը,— աշխատել է այնպիսի պրոբլեմների լուծման վրա, որոնք անմիջականորեն կապված են Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսագովայան և կուլտուրական շենարարության հրատապ խնդիրների հետ: Զգալի հաջողություններ են ձեռք բերել ֆիզիկոսները, մաթեմատիկոսները, աստղաբարձրիները:

Գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների ինստիտուտների կոլեկտիվները աճեցրել են ցորենի, եղիափացորենի նոր տեսակները մասնաւորվել են ենթական բաժանումներում կենդանական հարստությունները, միջոցները են մշակվել գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների դեմ պայքարելու համար:

Հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտները հրապարակել են մի շարք գիտական աշխատություններ և մենագրություններ հայոց պատմության. և գրականության հարցերի վերաբերյալ: Տեղի

## ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

է ունեցել Հայկական և Վրացական ՍՍՌ-ների Գիտությունների ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիա, որտեղ լսվել են 25 զեկուցում՝ նվիրված եղբայրական երկու ժողովուրդների պատմության, նրանց նյութական կուլտուրայի և հայ-վրացական ֆիլոլոգիայի հարցերին: Այդ սեսիան զգալի փոքր է խաղացել Վրաստանի և Հայաստանի գիտականների գիտական կապերը ամրապնդելու գործում:

Ընթացիկ տարում ուսապուրիվել է գիտականները աշխատում են ալիքի քան 30 պրոբլեմի լուծման վրա, որոնք անմիջապես կապված են արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի հետագա զարգացման խնդիրների հետ:

Մեծ աշխատանք պետք է կատարվի հոգագործության խոտադաշտային սիստեմը արմատավորելու և դաշտապաշտպան անտառատնկումների գծով նախատեսված միջոցառումները իրագործելու, կոլխոզացին ցանքերը «Արտաշատի-42», «Եղվարդի» ցորենի նոր տեսակներով, շաքարեղիքնով ընդլայնելու, բամբակի և ծխախոտի նոր տեսակներ աճեցնելու ուղղությամբ: Նարունակվում են օգտակար հանածոների ու հոմքի հետախուզության և հայտնաբերման աշխատանքները արդյունաբերության զանազան ճյուղերի համար:

Այս տարում մեր գիտնականները ավելի և եռանդում կերպով կզբաղվեն ֆիզիկայի, մաթեմատիկայի, աստղաբաշխության, բիմիայի և այլ գիտությունների մի շարք պրոբլեմների ուսումնասիրությամբ:

1949 թվին լույս կտեսնեն դասագրքեր հայ ժողովրդի պատմության և հայ գրականության վերաբերյալ: Կշարունակվի ուսուհայերեն և հայ-ուսաներեն մեծ բառարաններ կազմելու աշխատանքը:

Այնուհետև զեկուցողը կանգ է առնում Ա-  
կադեմիայի կազմակերպական-տնտեսական  
գործունեության, կաղքերի պարտրաստման  
վրա:

Վերջում զեկուցողը վատահություն է  
հայտնում, որ ռեսպուբլիկայի գիտնական-  
ները, գիտակցելով իրենց պարտքը ժողո-  
վրդի առաջ, բոլոր ուժերը կողոքադադրմն մեր  
սոցիալիստական Հայրենիքի հետագա  
բարգավաճման համար:

Զեկուցման առթիվ ծավալված մտքերի  
փոխանակությանը մասնակցեցին Հայկա-  
կան ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իս-  
կական անդամ է. Հովհաննիսյանը, թղթա-  
կից-անդամ Ա. Ղարիբյանը, քիմիական գի-  
տությունների դոկտոր Ա. Մնջոյանը, պրո-

ֆեսոր Ի. Կուսիկյանը, բիոլոգիական գիտու-  
թյունների թեկնածու Թ. Կատարյանը-  
Փողովը հաստատեց Ակադեմիայի 1948  
թիվ աշխատանքի՝ հաշվետվությունը. և գի-  
տահետազոտական աշխատանքների 1949  
թիվ պլանը:

Փողովը քննարկեց նաև կազմակերպական  
հարցեր. Ակադեմիայի ինստիտուտների և  
հիմնարկների աշխատանքի օպերատիվ ղե-  
կավարությունն ուժեղացնելու համար ընդ-  
հանուր ժողովը որոշում ընդունեց ստեղծել  
բարտուղարություն՝ բաղկացած դիմավոր  
բարտուղարից և երկու քարտուղարից:

Դրանով Հայկական ՍՍՌ Գիտությունների  
Ակադեմիայի տարեկան ժողովը իր աշխա-  
տանքը ավարտեց:

## ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՅԱՆ ՆՈՐ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադե-  
միայի սխստեմում կազմակերպված է Պրո-  
դարձության նոր գիտահետազոտական  
ինստիտուտ, որի բազան հանդիսանում է  
ՍՍՌ Միության Կոնսերվի արդյունաբերու-  
թյան ինստիտուտի փորձա-սելիկցիոն կա-  
յանը և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ա-  
կադեմիայի Գենետիկայի և սելիկցիայի  
ինստիտուտի պատղարության սեկտորը:

Ինստիտուտը մշակելու է գիտական այն  
պրոբլեմները, որոնք կապված են միայն  
մերձարևարձային պատղարության, այլ  
և Հայաստանի լեռնային ու արդյունաբերա-  
կան պատղարության զարգացման հետ:

Հայկական ՍՍՌ-ում մերձարևարձային  
պատղարությունը զարգացնելու մասին  
ՍՍՌ-Մ Մինիստրների Սովիայի որոշման ի-  
րականացումը ժողովրդա-տնտեսական մեծ  
նշանակություն ունի: Այդ որոշման համա-  
ձայն մերձարևարձային պատղարության  
տարածությունը մինչև 1955 թիվը ավելա-  
նալու է 10 հազար հեկտարով: Առանձնա-  
պես ուշադրություն է նվիրվելու ձիթենու,  
թքենու, նուան, նուշի, ընկուզենու և մերձ-

արևադարձային այլ կուլտուրաների զար-  
գացմանը:

Ռեսպուբլիկայի մի շարք շրջաններ, Նո-  
յեմբերյան, Շամշադին, Խջւան, Մեղրի, Գո-  
րիս, ագրոկլիմայական միանգամայն նը-  
պաստավոր պայմաններ ունեն մերձարևա-  
րձային պատղարության զարգացման  
համար:

Ռեսպուբլիկայի մաս բոլոր հնարավո-  
րությունները լեռնային շրջաններում պրտ-  
ղարության արագ զարգացման համար:  
Լեռնականի շրջակայրում միշուրինյան սոր-  
տերից հիանալի տանձ ու խնձոր է ստաց-  
վել:

Նոր գիտահետազոտական ինստիտուտի  
անելիքներից մեկն է, կոլխոզներին օգնել  
հատկապես տնկումների աշխատանքների  
պլանները իրականացնելու գործում: Բացի  
այդ ինստիտուտը օգնելու է կոլխոզներին  
մերձարևարձային կուլտուրաների նոր  
ցրտադիմացկան տեսակներ ստանալու գոր-  
ծում, միաժամանակ ցուց տալով գիտա-  
կան օգնություն կոլխոզներին:

## ՔԱՂՅՐ ՆՈՒՇԻ ՍՈՎԻՆՇՈՒՄ

Երևանից 16 կիլոմետր հեռու, Թերիայի  
շրջանում, Ստորին Զանգվիլ ջրանցքով ոռոգ-  
վող հողերում, տարածվում է քաղցր նուշի  
Հայաստանում առաջին սովորող, ռեսպու-  
թիկայի մերձարևարձային կուլտուրաների  
խոշոր բազաներից մեջը: Նրա տարածու-  
թյունը կազմում է 400 հեկտար, որից 150  
հեկտարն արդեն յուրացվել է:

Ընդամենը երեք տարի առաջ այդ տեղը  
մերկ, քարքարոտ մի վայր էր: Այժմ 31  
հեկտար տարածության վրա աճված են նու-

շի երկամյա ծառերի շարքերը: Հողը լրիմ  
օգտագործելու համար նշանակություն միջև տրն-  
կվել են 5 հազար ղեղձենի, որոնք բերք կը-  
տան նուշի պատղարերությունից առաջ: Ուժ  
հեկտար տարածության վրա աճում են ֆիս-  
տաշկայի մատղաշ տնկիները: Ստեղծվել է  
նուշի սեփական տնկարան:

Սովորում ծավալվել են գարնան աշխա-  
տանքները: Չորս օրվա ընթացքում ավարտ-  
վել է դաշտապաշտպան անտառաշերտերի  
տնկումը, որը ձգվում է սովորությունից յուսիսա-

յին սահմանով հինգ կիլոմետր երկարությամբ: Տնկվել է բարդու և փշատի 120 հար կտրոն:

12 հեկտար տարածությամբ մի այլ հողամասում սկսել են նշենի տնկել: Տնկում են նշենու նիկիտյան սորտերը, որոնք լավ էին բռնել անցյալ տարի, ինչպես նաև Ողջաբերդի (Կոտայք) և ուշ ծաղկող մյուս տեղական սորտերը, որոնք աճեցրել է Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գենետիկայի ինստիտուտը:

Այս տարի տնկվելու է նշենու մոտ 15 հազար տնկի 60 հեկտար տարածության վրա: Ազատ տարածությունը օգտագործելու նպատակով նշենիների միջև տնկվելու է 15 հազար գեղձենու և 3 հազար ծիրանի տնկի:

Ֆիստաշկայի տունկերը գրավելու են 20 հեկտար տարածություն:

Սովորողի ամբողջ տերիտորիայում ծավալվել են մելիորատիվ աշխատանքները: Անց են կացվում 7 կիլոմետր երկարությամբ նոր ռոռոգիչ առուներ, մաքրվում ու կարգի է բերվում սովորողի մեկ կիլոմետր երկարությամբ մագիստրալ ջրանցքը:

Տնկարանային տնտեսությունը չորս հեկտարով ընդարձակելուց բացի, սովորողում հիմնվում է մայր-այգի, որտեղ հավաքվելու են Միության մեջ աճող նշենիների լավագույն տեսակները: Այդ նպատակով միայն Դրիմի բուսաբանական այգուց բերվում է նշենու 18 տեսակ:

## ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գորիսի շրջանի հարավային մասի կողինուներում հաջողությամբ աճում և լավ բերք են տալիս սերկալիի, պիստակի, թղենու, նոնինու, ընկուղենու և այլ կուտուրաների ծառեր:

Կյորու, Մաղանջուղ, Հալիձոր, Խնձորեսկ գյուղերի կոլխոզներն իրենց ոչ ընդարձակ այլիներից ամեն տարի տասնյակ հազար ռուբրու եկամուտ են ստանուած: Միայն Շինուհայր, Խոտ, Հալիձոր գյուղերի կոլխոզները 1948 թվին հավաքել են հարյուրավոր ցենտներ ընկույզի բերք:

Շրջանում նախապատրաստական լայն աշխատանք է տարվում 1950—1955 թվերի ընթացքում մերձարևադարձային կուտուրաների մշակությունը 300 հեկտարի հասցնելու համար: Մաղանջուղ գյուղի Կալինինի անվան կոլխոզը ներկայումս ունի 3,5 հեկ-

տար թղենու, նոնինու և սերկալիի այգի: Վերջերս կազմակերպվեց հատուկ օղակ, որն զբաղվելու է մերձարևադարձային կուտուրաների մշակությամբ: Արդեն սկսվել է այգիների նախնական մշակման և ջրատար ցանցի նորոգման աշխատանքը, պատրաստվել է մեկ հեկտար խոպան հող՝ տնկարանի համար, որտեղ աճեցվելու են մոտ 20 հազար մերձարևադարձային կուտուրաների տնկիներ:

Շինուհայր, Խոտ, Հալիձոր գյուղերի կողինուներում ցանքի համար առանձնացվել է մի ֆանի ցենտներ ընկույզ: Քարահունչի և Կյորուի կոլխոզներու նոր ջրամբարներ են կառուցում և նախապատրաստում են տնկարանների համար հատկացված հողամասերը: Գարնանը շրջանը կտուանա մեծ քանակությամբ նշենու, ճապոնական խուրմայի և այլ կուտուրաների տնկիներ:

## ԱՆՏԱՌՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՆԿԱՐԱՆԵՐԸ

Անտառական գագանի շրջանային գրասենյակը այս տարի կազմակերպում է 9 հեկտար տարածությամբ տնկարան, որտեղ աճեցվելու են զանազան տեսակի ծառեր: Տնկարանի համար ձեռք են բերված ընկուղենու, կաղնու, խնձորենու, տանձենու, թիզենու, եղնու, հաճարենու, բոխենու և հացենու սերմեր: Տնկարանի համար առանձնացված հողը պարարտացված է, սերմերը փոխադրված տնկման վայրը:

Գրասենյակը կազմակերպում է նաև միշտիրինյան պտղատու ծառերի տնկարան:

Այստեղ առանձին բաժնում կաճեցվեն մերձարևադարձային կուտուրաներ:

Անտառական ծառատեսակների զարգացման համար կազմակերպվող տնկարանը, բացի Ղափանից, կապահովի նաև Միսիանի, Գորիսի ու Մեղրու շրջանների պահանջը:

Ղափանի անտառների, որոնք ամբողջությամբ դաշտապաշտպան նշանակություն ունեն, նոսր և բաց տարածություններում այս տարի կաճեցվեն հաճարենու ծառեր:

## ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅգԻՆ

Կիրովականի բուսաբանական այգում ըստեղծված են հնարավոր բոլոր պայմանները

Ֆիշուրինյան գիտության լայն զարգացման համար:

Այսու գիտական աշխատողները մի շաբթ հաջող փորձեր են կատարել, աճեցնելով այնպիսի բուկսեր, որոնք մինչև հիմա չեն աճել Հայաստանում:

Բուսաբանական այդին, որն ունի 14 հեկ-

տար տարածություն, աճեցրել է 900 տեսակից ավելի տեղական, սիբիրյան, կովկասյան մերձարեադարձային ծառեր, թփեր և բույսեր: 1000 քառակուահ մետր տարածության վրա աճեցված է 200 տեսակ ծաղիկ:

## ՆՈՐ ԻՆՍԻՏՈՒՏԸ

Ռեսպուբլիկայի ավելի քան 13 հազար ուսուցիչների քաղաքական-տնտեսական և մեթոդա-մանկավարժական գիտելիքները խորացնելու, նրանց պարբերաբար որակավորելու նպատակով, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ, երևան

բաղադրում կազմակերպվում է ուսուցիչների որակավորման ինստիտուտ: Ինստիտուտը ունենալու է պատմության, հայոց լեզվի ու գրականության, ուսաց լեզվի ու գրականության, մաթեմատիկայի, քիմիայի ու բնագիտության, մանկավարժության և այլ կարինետների ու գրադարան:

## ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԼԵԿՏՈՐԻՈՒՄՆԵՐ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կովուուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեի Պասախոսական հենտրոնական բյուջեում նպատակով, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ,

շաններում կազմակերպվում է կոլխոզային լեկտորիումներ: Այժմ գործում են 30 յիկուուրիումներ: Մինչև ապրիլ ամավագ վերջը կազմակերպվելու է ևս 30 լեկտորիում:

## ԳՅՈՒՂԵՐԸ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՎՈՒՄ ԵՆ

ՄԵՂՐԻ.— Շրջանի 16 գյուղերից 15-ը էլեկտրիֆիկացվել են: Վերջին գյուղի՝ Նյուվադիի էլեկտրիֆիկացումն ավարտվելու է ապրիլին:

Էլեկտրական էներգիայի օգտագործման բազայի վրա նախատեսված է, մերձարևագործարանին կովուուրաների ու պատղառու այգիների համար հատկացված 100 հեկտար հողամասը ոռոգելու նպատակով, ջրհաններ կառուցել Շվանիձոր, Արդարա և Նյուվադի գյուղերում: Մեղրի և Լիճք գյուղերի կոլխոզները կառուցելու են սղոցարաններ և էլեկտրիֆիկացնելու են դարբնոցների աշխատանքները: Լիճքի կոլխոզը ձեռք է բերել ոչխարների բուրդը խուզելու էլեկտրական մեթոնա:

ԴԱՓԱՆ.— Ակսվել են նորաշենիկգեսի

կառուցման աշխատանքները, որոնց ակտիվ մասնակցություն են ցուց տալիս մոտակա գյուղերի աշխատավորները: Էլեկտրակայանը շահագործման հիմնանվի այս տարվա հոկտեմբերի 1-ին: Էլեկտրական լուս կըստանան Առաջաձոր, Չորաստան, Օխտար, Նորաշենիկ, Երվանենց, Վերին ու Ներքին Խոտանան և այդ ենթաշրջանի մնացած գյուղերը:

Մինչև հունիսի 1-ը էլեկտրիֆիկացվելների, Վաշագան, Բաղաբովք, Գյուտկովմ, Ճակատեն գյուղերը: Այդ գյուղերում սկսվել է տրանսֆորմատորների շենքերի կառուցումը, ձեռք են բերվում էլեկտրասյուններ և այլն:

Հանքվարշությունը վերցրել է Բաղաբուրց գյուղի էլեկտրիֆիկացման շեֆությունը:

## ՄԻԿՈՅԱՆԻ ՇՐՋԱՆՆ ԱՅՍՈՐ

ԳՅՈՒՂԵՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՅՈՒՄԸ.— Այս տարի կառուցվելու և շահագործման է հանձնելու Արենիգէսը, որն ունենալու է 720 կիովտար կարողություն: Էլեկտրիֆիկացվելու են Զիվա, Աղավնաձոր, Թինդ, Ելքին և ուրիշ գյուղեր: Էլեկտրականության ուժով են աշխատելու 12 գյուղերի կոլխոզների արտադրական օբեկտները: Արենիի հիդրոկայանը էլեկտրաէներգիա է մատակարարելու նաև Վեցու շրջանի մի շաբթ կոլխոզների:

Մինչև մայիս ամիսը պարբռվելու են Միկոյանգէսի երկրորդ հիդրոթափական աշխատանքների:

ԲԲ: Էլեկտրիֆիկացվելու են Եղեգնիս, Քարավոլու, Թառաթումբ, Սալիի, Հորա, Աղքենդ, Ալայազ և Ղավուշուղ գյուղերի կոլխոզները: 1950 թվին լրիվ ավարտվելու շրջանի կոլխոզների էլեկտրիֆիկացումը: Էլեկտրաէներգիայով են աշխատելու հացահատիկային կալսիները և էլեկտրիֆիկացվելու են գյուղատնտեսական աշխատանքների բոլոր պրոցեսները:

ՆՈՐ ՈԱԴԻՌՀԱՆԳՈՒՅՑՑՑՆԵՐ.— Շահագործման է հանձնվել Արենի գյուղի ուղղուհան-

գուցը: Ռադիոհանգուց է կառուցվել նաև Շատին գյուղում. այստեղ կոլխոզնիների բնակարաններում անց է կացված 100-ից ավելի ռադիոկետ:

**ԴԱՇԱՊԱՇԵՑՊԱՆ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐ.**— Առաջիկա գարնանը տնկվելու են 5 հեկտար դաշտապաշտպան անտառաշերտեր, ծառագարդիվելու են գյուղերի շրջակայքը, տնկվելու է 70 հազար պտղատու ծառ:

ԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՔՍԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ.— Քսան հեկտար տարածովյան վրա տնկվելու են մերձարևադարձային կուլտուրաներ՝ նուշ, նուշ, ընկույզ, սերկել և այլն: Այս տարի խաղողի այգիները ընդարձակվելու են 50 և պտղատու այգիները 100 հեկտարով:

Խաղողագործության և պտղաբուծության հետագա զարգացման համար այս տարի կազմակերպվում է 10 հեկտար խաղողի և 4,5 հեկտար պտղատու ծառերի տնկարան: 30 հեկտարի վրա կազմակերպվելու է անտառատնկարան, որը տնկանյութ է մատակարարելու շրջանի կոլխոզներին՝ հետագայում անտառապատում անցկացնելու համար:

**ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ.**— Հայկական ՍՍՌ Մննդարդյունաբերության մինիստրության Շամպայն կոմբինատի Միկոյանի գործարանին կից շուտով շահագործման հանձնվի հումքի վերամշակման նոր ցեխը, որը լրիվ մեքենայացվելու է: Ուժեղ թափով առաջ են գնում օղու թորման գործարանի կառուցման աշխատանքները: Օղու գործարանը այս տարի հանձնվելու է շահագործման և արտադրելու է 6000 լիտր օղի: Այս տարի կառուցվելու և շահագործման են հանձնվելու տակառագործական և փականագործական ցեխները: Շամպայն կոմբինատի Միկոյանի գործարանը տարեկան արտադրելու է մինչև 50 հազար գեկայիտը բարձրորակ գինի:

**ՀՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՎ ԱՌՈՒՆԵՐ.**— Ելփին, Ռինդ, Խաչիկ, Աղավնաձոր և Գանձակ գյուղերում կառուցվելու են 300 հեկտար հողամաս:

20 լճակները լախացվելու են և լրացուցիչ կարգով ոռոգելու են 100 հեկտար հողամաս: Նոր մայր առու են կառուցվելու Միկոյան գյուղի «Արանա» կոշվող հողամասում, որի երկարությունը լինելու է երեք կիլոմետր: Այդ առուն ոռոգելու է 30 հեկտար տարածություն: Ղաբախլու գյուղի աշխատավորների ուժերով կառուցվելու է 7 կիլոմետր երկարությամբ «Ղազմա» կոշվող առուն, որը ոռոգելու է 100 հեկտար տարածություն:

**ԽՄԵԼՈՒ ՄԱՔՈՒՐ ԶՈՒՐ.**— Այս տարի շահագործման է հանձնվելու նոր ջրմուլը: Երջկենարոնի, ինչպես նաև Գետափ ու Գլածոր գյուղերի ազգաբնակչությունը «Ղուզեր» կոշվող վայրից ստանալու է սառնորակ խմելու ջուղի:

**ՆՈՐ ԲԱՂՆԻՔՆԵՐ.**— Այս տարի շրջանի 15 գյուղերում կառուցվելու են նոր բաղնիքներ: Բաղնիքներ են կառուցվելու Գնիշիկ, Խաչիկ, Արենի, Չիվա, Ելփին, Աղավնաձոր, Ռինդ և այլ գյուղերում:

**ԱԿՈՒՄԲՐՆԵՐ.**— Միկոյան, Արենի և Խաչիկ գյուղերի կոլխոզներում կառուցվելու և շահագործման են հանձնվելու երկարկանի նոր ակումբներ: Ակումբները ունենալու հնուոր հարմարությունները՝ խաղասենյակներ, գրադարան-ընթերցարան, հանգստի սենյակ և դաշիճ:

**ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ.**— Շիկոյան, Արենի և Խաչիկ գյուղերում ուսուցչությունների համար կառուցվելու են 1-2 հարկանի բնակելի շենքեր: Բացի այդ կոլխոզներին իրենց համար կառուցվելու են 200 բնակարան:

**ՆՈՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՅ.**— Այս տարի ավարտվելու է Արենի գյուղում կառուցվող հիվանդանոցի շենքը, որը շահագործման է հանձնվելու մինչև մայիս ամիսը\*):

\* ) «Սովետական Հայաստանում» բաժնի նյութերը քաղված են Հայաստանի Հեռագրական Գործակալության (ՀՀԳ) հաղորդադրություններից և սովետական մամուլից:

